ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» _____ 2022 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն-ը, ի դեմս կենտրոնի տնօրեն Բաղդասարի Գաբրիելյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի և հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված **210594.3** (երկու հարյուր տաս միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ –ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան

հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **210594.3** (երկու հարյուր տաս միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
ՀՀ ՖՆ գանձապետական բաժանմունք
ՀՀ 900011024115
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ա.Սաղյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն
ք. Երևան, 0014, Պարույր Սևակի, 7
Թիվ 1 Գանձապետարան
ՀՀ 900018005679
ՀՎՀՀ 01008904

Տնօրեն՝ Բ.Գաբրիելյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 1
«27» 01 2022 թ.
N 4-14 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի և հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Մերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Բարդուխ Կառլենի Գաբրիելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2022 թ. N 4-14 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 210594.3 (երկու հարյուր տաս միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 ՀՀ ՖՆ գանձապետական բաժանմունք ՀՀ 900011024115 ՀՎՀՀ 00005673	ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ք. Երևան, 0014, Պարույր Սևակի, 7 Թիվ 1 Գանձապետարան ՀՀ 900018005679 ՀՎՀՀ 01008904
Նախագահ՝ Ա.Սաղյան	Տնօրեն՝ Բ.Գաբրիելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 2
«__27___»_____01_____ 2022 թ.
N _____Ե-14_____ պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի և հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Կենսաբազմազանության և կենսանվտանգության պահպանության միջազգային կոնվենցիաների շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման կարևորագույն խնդիրներից է երկրի ցամաքային և ջրային էկոհամակարգերի կենսաբազմազանության հետազոտումը և վերջինիս սպառնացող վտանգների բացահայտումը:

Հայաստանի հյուսիսային շրջանները, որտեղ ներկայացված է լանդշաֆտների լայն սպեկտր, կենսաբազմազանության տեսակետից հանգուցային դեր ունեն: Վերջին տասնամյակների ընթացքում այս տարածաշրջանում ֆաունայի հատուկ՝ նպատակաուղղված ուսումնասիրություններ չեն կատարվել, իսկ եղած տեղեկությունները չեն արտացոլում արդի վիճակը և վաղուց թարմացման կարիք ունեն: Նույնը վերաբերում է այս տարածքի ԲՀՊՏՆ-երին. դրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ գույքարման ցուցակները կամ բացակայում են կամ թերի են, ճշտգրտման և վերանայման կարիք ունեն սահմանները և բնապահպանական կարգավիճակները:

Ծրագրի նպատակն է վերլուծել և գնահատել նշված տարածքների ԲՀՊՏ-ների և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոնտների արդի վիճակը, սպառնալիքները, զարգացման միտումները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Կենտրոնը հիմնականում ապահովված է բարձրորակ մասնագետներով, սարքավորումներով, համակարգչային ժամանակակից ծրագրերով և տրանսպորտային միջոցներով: Սակայն նախագծի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է նաև.

- նոր, ավելի ժամանակակից սարքավորումներ (մանրադիտակներ, տեսախցիկներ, սառնարաններ և այլն), կաբինետային կահույք, ինչպես նաև համակարգիչներ
- փորձարարական կենդանիներ, ռեակտիվներ, այլ նյութեր և պարագաներ
- գիտարշավների համար նպատակային ֆինանսական հատկացումներ:
- երիտասարդ կադրերի պատրաստում և կենտրոնի հաստիքային կազմում նրանց հետագա ներգրավման հավաստի հնարավորություն: Անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ հաստիքներ երիտասարդ մասնագետների համար:
- գիտնականների միջազգային գիտաժողովներում մասնակցության, վերապատրաստման և առաջատար արտասահմանյան կենտրոններում համատեղ աշխատանքի հնարավորություններ, որի համար պահանջվում են գործուղման համապատասխան հատկացումներ:

- Ֆինանսական միջոցներ կապիտալ նորոգման, գիտական կոլեկցիոն նյութերի և թանգարանի պահպանման, ՀԳՓԿ-ի ենթակառուցվածքի և հետագա գործունեությունն ապահովելու համար:

Հետազոտությունների արդյունավետությունը կապահովվի գիտարշավների արդյունքում փորձանյութի կանոնավոր հավաքով, հավաստի տվյալների ձեռք բերման և դրանց համակողմանի վերլուծության շնորհիվ:

Ստացված արդյունքները կամփոփվեն տարեկան հաշվետվություններում և կներկայացվեն հրապարակումների տեսքով:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Նախատեսվող հետազոտություններն իրականացվելու են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում (ԿՀԷԳԿ), որն իր կազմում ներառում է 2 ինստիտուտ՝ Կենդանաբանության ինստիտուտ և Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ: Օգտագործվելու են կենտրոնում առկա նյութատեխնիկական միջոցներն, սարքավորումները (այդ թվում տրանսպորտային՝ գիտարշավային ավտոմեքենաներ, "Հիդրոլոգ" գիտահետազոտական նավ, մոտոռային նավակ) և մարդկային ռեսուրսները: Աշխատանքների կատարմանը կներգրավվի ինստիտուտների ողջ աշխատակազմը:

Գիտարշավների իրականացման համար կօգտագործվեն կենտրոնի տրամադրության տակ գտնվող տրանսպորտային միջոցները: Ուսումնասիրությունների ընթացքում կդրսևորվի էկոհամակարգային մոտեցում: Կկիրառվեն կենդանաբանական, միջատաբանական, էկոլոգիական, մակաբուծաբանական, էկոլոգիական, էթոլոգիական, ջրակենսաբանության և ձկնաբանության բնագավառներում ընդունված գիտական մեթոդներ՝ ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից (կարիոլոգիական, բջջագենետիկական, մոլեկուլային-կենսաբանական և այլն) մեթոդներ և մոտեցումներ:

Ծրագիրը բաղկացած է 2 ենթաթեմաներից:

Ենթաթեմա 1. «Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի կենսաբազմազանության ուսումնասիրություն»
(ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտ)

Ենթաթեմա 2. «Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» **(ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ)**

Հաշվի առնելով այն, որ Տավուշի մարզում առկա են բազմաթիվ ԲՀՊՏ–ներ, և դրանց տարածքը մեծ է, Սևանա լճի բնապահպանական և տնտեսական կարևորությունը, ինչպես նաև էկոհամակարգերում տեղի ունեցող փոփոխությունների միտումները ճիշտ հասկանալու և գնահատելու համար, 2022 թ. հետազոտությունները ևս ծավալվելու են Տավուշի և Գեղարքունիքի մարզերի ԲՀՊՏ-ներում («Դիլիջան» և «Սևան» ազգային պարկեր, «Իջևանի», «Գանձասար-Վերին Աղդանի», «Արջաթիլենու», «Գետիկի», «Գիհու նոսրանտառային», «Ախնաբաղի կենու պուրակ» արգելավայրերում: Ուսումնասիրվելու է անողնաշար կենդանիների խոշոր կարգաբանական խմբերի ֆաունան. փափկամարմիններ (Mollusca), տզեր (Acarina) միջատներից (Insecta) ՝ կարծրաթևեր (Coleoptera), երկթևեր (Diptera), թեփուկաթևեր (Lepidoptera՝ Rhopalocera և Heterocera); ողնաշարավոր կենդանիների (երկկենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ) ժամանակակից ֆաունան, սուբֆոսիլ նյութերը և պարազիտոֆաունայի ներկայացուցիչները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակների վրա: Այդ նպատակով հետազոտություններ են

իրականացվելու նաև ԲՀՊՏՆ-երի սահմաններից դուրս, ռեկրեացիոն և այլ տարածքներում՝ կենսաբազմազանության վրա մարդու տնտեսական գործունեության ազդեցության, ԲՀՊՏՆ-երում պահպանության կարիք ունեցող տեսակների ընդգրկման, ԲՀՊՏ-ների բնապահպանական դերի, դրանց սահմանների և կարգավիճակի համապատասխանության գնահատման համար:
Կենդանատեսակները որպես շրջակա միջավայրի կոմպոնենտ և ռիսկի գործոն խդրի շուրջ ուսումնասիրվելու են.

- շրջակա միջավայրի աղտոտվածությունը ինվազիոն տարրերով,
- ինվազիոն տարրերով վարակման աղբյուրներն ու ուղիները:
- բարձր արդյունավետությամբ օժտված բիոագենտների (ակարի- և էնտոմոֆագերի) որոնում՝ կենսաբանական պայքարում օգտագործելու նպատակով:
- գյուղատնտեսական կենդանիների՝ մակաբույծներով հարուցված հիվանդությունների և մշակովի բույսերի վնասատուների դեմ կանխարգելման, բուժման և պայքարի էկոլոգիապես անվտանգ միջոցների գիտական հիմքերի մշակում:

Հետազոտությունների համար փաստացի հիմք կծառայեն դաշտային ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալները և ԿՀԷԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտում պահպանվող հարուստ կոլեկցիոն նյութերը:

«Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» ենթաթեմայի շրջանակներում 2022թ. կիրականացվեն Աղստև գետի ջրերի որակի և կենսաբազմազանության վրա Գետիկ, Խնձորուտ, Բլդան վտակների ազդեցության բացահայտման հետազոտություններ:

Գետիկը Աղստև գետի աջ վտակն է: Երկարությունը 58կմ է, ջրհավաք ավազանի մեծությունը 586քառ. կմ: Սնումը հիմնականում ձնաանձրևային է, ջրի միջին տարեկան ծախսը՝ 2,95 մ³/վրկ: Վարարում է մայիս–հունիս ամիսներին: Գետիկի ավազանում է գտնվում Աղնաբաթի կենս պետական արգելավայրը, իսկ Աղստևի վտակ Փայտաջուր գետի ավազանում ՝ Գանձաքարի պետական արգելավայրը:

Խնձորուտ գետը սկիզբ է առնում Միափորի լեռների հյուսիսարևելյան լանջերից, 2000 մ բարձրությունից և Այգեձոր գյուղից հարավ-արևմուտք՝ ձախից միախառնվում է Աղնջա գետին: Երկարությունը 24 կմ է, ավազանը՝ 118 կմ², տարեկան միջին ծախսը 1.0 մ³/վրկ, հոսքը 3 միլիոն մ³: Խնձորուտը միակ գետն է, որ ամբողջ հոսանքով գտնվում է շրջանի տարածքում: Խնձորուտի վրա է գտնվում շրջանի միակ Շառաչ ջրվեժը (Բայդուշի ձորում), որի ջրերը գահավիժում են 15 մ բարձրությունից

Բլդան գետը սկիզբ է առնում Հալաբի լեռնաշղթայի Բովաքար լեռնագագաթի հարավային լանջից՝ 2800 մ բարձրությունից: Երկարությունը 15 կմ է, ջրահավաք ավազանը՝ 72 կմ²: Սնումը ձնաանձրևային է, վարարումը՝ ապրիլ-մայիսին: Տարեկան միջին ծախսը 0,3 մ³/վ է, հոսքը՝ 15,1 միլիոն մ³: Գետահովիտն ունի ռեկրեացիոն մեծ նշանակություն: Բլդանի հովտում են «Դիլիջան» հանքային ջրերի աղբյուրները, առողջարաններ և մարզաառողջարանային համալիր:
Ելնելով այն հանգամանքից, որ Աղստև գետի ջրհավաք ավազանում գտնվում են հատուկ պահպանվող տարածքներ (արգելոցներ և արգելավայրեր) գետի և վտակների կենսաբազմազանության, ջրերի հետազոտությունները և որակի պահպանությունը դառնում է առավել կարևոր:
Աղստև գետի ջրաշխարհի վրա վտակների ազդեցությունը բացահայտելու նպատակով բազային ֆինանսավորման շրջանակներում, մարզի սահմաններում, կիրականացվեն վերոհիշյալ վտակների հիդրոէկոլոգիական հետազոտություններ: Կուսումնասիրվեն նշված վտակների սնդային շղթայի հիմնական օղակները՝ հատակային ֆաունան, մակրոֆիտները և ձկնաշխարհը:
2022 թ. կշարունակվեն նաև Սևանա լճի մոնիթորինգային հետազոտությունները: Լճի հետազոտման անհրաժեշտությունը բխում է նաև լիմնոհամակարգի անկայունությունից, ինչպես նաև ներջրամբարային պրոցեսների ակտիվացումից: Սևանա լճի հետազոտությունների հարյուրամյա շարքը չընդհատելու համար ուսումնասիրություններ կիրականացվեն Մեծ և Փոքր Սևանների մոդելային դիտակետերում: Կուսումնասիրվեն կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչները և նրանց զարդացման օրինաչափությունները:

5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդված, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում, գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Բարդուխ Գաբրիելյան (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) Բարդուխ Գաբրիելյան (անուն ազգանուն)

Հավելված N 4
«27» 07 2022թ.
N 4-14 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

««Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի և հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրություն» » ծրագրի

(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	189305.7	*37861.1*	*47326.4*	*47326.4*	*56791.8*
2	տնտեսական և այլ ծախսեր	21288.6	*4257.7*	*5322.1*	*5322.1*	*6386.7*
ԸՆԴԱՄԵՆԸ		210594.3	*42118.8*	*52648.5*	*52648.5*	*63178.5*

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_____Բ.Գաբրիելյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (_____Ա.Ալեքսանյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4.1
«27» 07 2022թ.
N 4-14 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ [1]

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	13173.4
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*4139.5*
	գազի ծառայություն	*6644.8*
	ջրամատակարարման ծառայություն	*680.2*
	կապի ծառայություն	*1508.9*
	աղբահանություն	*200*
	Այլ ծախսեր	*8115.2*
2	Գույք	800
3	Սարքեր և սարքավորումներ	715.2
4	Նյութեր	1200
5	Գործուղումներ	1800
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	300
7	Արշավախմբեր	1300
8	Հրատարակման ծախսեր	200
	անասնակեր	1800.0
Ընդամենը		**21288.6**

Կազմակերպության տնօրեն՝ _____ (_Բ.Գաբրիելյան_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (_Ա.Ալեքսանյան____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

[1] *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվմ*

Հավելված 5
«__27___» հունվարի 2022թ.
N ___Ե-14_____ պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոնտների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում»
ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1.	Գաբրիելյան Բարդուխ Կառլենի	կենտրոնի տնօրեն/ բաժնի վարիչ	կ.գ.դ.	487.47
2.	Մովսեսյան Սերյոժա Հովհաննեսի	գիտ.ղեկավար/լաբ.վարիչ	կ.գ.դ., ակադեմիկոս	230.27
3.	Խաչատրյան Հասմիկ Գուրգենի	գիտ.գծով փոխտնօրեն/ կենտ. Գիտքարտուղար/ա.գ.ա.	կ.գ.թ.	358
4.	Ալեքսանյան Անուշ Սարգիսի	գլխավոր հաշվապահ		300
5.	Մինասյան Հեղինե Գուրգենի	Կենտրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետ՝		180
6.	Արծրունյան Արմեն Ալբերթի	Փոխտնօրեն ընդհանուր հարցերով		200
7.	Թամազյան Անուշ Համլետի	Կենտրոնի տնօրենի քարտուղար-օգնական		120
8.	Պետրոսյան Արմեն Մարատի	Գնումների մասնագետ		80
9.	Մկրտչյան Անահիտ Համլետի	գրադանավար		93.3
10.	Առաքելյան Վահե Առաքելի	համակարգչ. օպերատոր		56.000
11.	Բարսեղյան Յուրա Հակոբի	ինժեներ		95
12.	Խաչատրյան Միշա Արշալույսի	վարորդ		100
13.	Հունանյան Գագիկ Աբասի	Պահակ/տնտեսվար		145
14.	Բաբայան Զուլիետա Հմայակի	պահակ		97
15.	Երկանյան Սամվել Հրանտի	պահակ		97
16.	Դաքեսյան Արմեն	պահակ		97
17.	Ղուկասյան Գոռ Խեչոյի	պահակ		97
18.	Հակոբյան Գարեգին Վասակի	ՀԷՁԻ պահակ		93.3
19.	Գուլանյան Գուրգեն	ՀԷՁԻ պահակ		93.3
20.	Զավադյան Ժորա Ավագի	պահակ, կաթսայատան սեզ.օպերատոր/ /5 ամիս/		157

* *Աշխատավարձը՝ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

21.	Նազինյան Գրիգորի Սարգսի	կաթսայատան սեզ.օպերատոր /5 ամիս/		90
22.	Ղալեչյան Մարտիկ Հրաչիկի	կաթսայատան սեզ.օպերատոր /5 ամիս/		90
23.	Սարգսյան Լյուդմիլա Մենտորի	հավաքարար		90
24.	Պողոսյան Գայանե Հովհաննեսի	հավաքարար		93.3
25.	Սուքիասյան Սամվել Վոլոդիայի	ՀԳՓԿ-ի վարիչ		160
26.	Սահակյան Հասմիկ Գրիգորի	ՀԳՓԿ-ի հաշվապահ		93.3
27.	Ենգիբարյան Սիմոն Ավանեսի	ՀԳՓԿ-ի պահեստապետ		90
28.	Գրիգորյան Վարանցով Երեմի	ՀԳՓԿ-ի տնտեսվար		90
29.	Սուքիասյան Ռիմա Սարիբեկի	ՀԳՓԿ-ի ավագ տեխնիկ		90
30.	Ենգիբարյան Հայկուշ Սեմյոնի	ՀԳՓԿ-ի տեխնիկ		45
31.	Իսախանյան Գայանե Մայորի	ՀԳՓԿ-ի ոչխարապահ		90
32.	Երիմյան Հերիք Խաչատուրի	ՀԳՓԿ-ի թռչնապահ		90
33.	Ճաղարյան Արաքսյա Վլադիմիրի	ՀԳՓԿ-ի անասնապահ		45
34.	Բաբայան Հովհաննես Գևորգի	ՀԳՓԿ-ի պահակ		90
35.	Մուրադյան Գառնիկ	ՀԳՓԿ-ի բանվոր		90
36.	Հակոբյան Վասակ Մաթևոսի	նավի կապիտան		100
37.	Մարգարյան Վազգեն Ալբերտի	նավի մեխանիկ		90
38.	Հակոբյան Մարտիկ Վասակի	կապիտանի օգնական		93.3
39.	Մանուկյան Սուսաննա Գուրգենի	նավի պահակ		90
40.	Դիլբարյան Կիմ Պավելի	ԿԻ ղեկավար, լաբ.վարիչ	Կ.գ.դ.	345.94
41.	Ղուկասյան Էվելինա Խեչոյի	ՀԷՁԻ-ի ղեկավար, ա.գ.ա.	կ.գ.թ.	345.94
42.	Քալաշյան Մարկ Յուրիի	լաբ.վարիչ	կ.գ.թ.	349.88
43.	Ղասաբյան Մամիկոն Գրիգորի	լաբոր.վարիչ	Կ.գ.թ.	349.88
44.	Աղայան Սարգիս Աղասու	Լաբ.վարիչ	կ.գ.թ.	349.880
45.	Գևորգյան Գոռ Արտակի	Լաբ.վարիչ	կ.գ.թ.	349880
46.	Համբարյան Լուսինե Ռաֆիկի	հիդրոէկոլոգ. բաժնի վարիչ	կ.գ.թ.	349.88

47.	Հակոբյան Սուսաննա Հակոբի	ջրակենսաբան.բաժնի վարիչ	կ.գ.թ.	349.88
48.	Աղասյան Լևոն Արամի	թանգարանի վարիչ, ա.գ.ա.	կ.գ.թ.	274.81
49.	Մանասերյան Նինա Հուսիկի	առաջատար գ.ա.	Կ.գ.դ.	250.010
50.	Հովհաննեսյան Վարուժան Ստեփանի	առաջատար գ.ա.	կ.գ.դ.	125
51.	Կարագյան Գայանե Հարությունի	առաջատար գ.ա.	կ.գ.թ.	250.010
52.	Ասատրյան Վարդան Լևոնի	առաջատար գ.ա.	կ.գ.թ.	250.01
53.	Դալլաքյան Մարինե Ռուսլանի	առաջատար գ.ա.	կ.գ.թ.	250.01
54.	Ստեփանյան Իլոնա Էդուարդի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
55.	Միրումյան Լյուդմիլա Սյունիքի	ա.գ.ա	Կ.գ.թ.	199.74
56.	Նիկողոսյան Մանյա Ահարոնի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
57.	Հարությունովա Լաուրա Զավադի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
58.	Ռուխկյան Մարտին Յակովի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
59.	Գևորգյան Հասմիկ Շավարշի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
60.	Հովհաննիսյան Ռուզան Լևոնի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
61.	Վարդանյան Մարինե Վազգենի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
62.	Շչերբակով Օլեգ Վալերիի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.740
63.	Ստեփանյան Լիլիթ Գագիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.74
64.	Հայրապետյան Արմինե Հովսեփի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.74
65.	Բարսեղյան Նելլի Էդիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.74
66.	Խաչիկյան Թեհմինե Գագիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	199.74
67.	Մելքոնյան Հրանուշ Ֆելիքսի	ա.գ.ա.	տնտ.գ.թ.	199.74
68.	Պետրոսյան Ռոզա Անդրանիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	149.810
69.	Բաղալյան Նորիկ Սուրենի	ա.գ.ա.	կ.գ.թ.	149.81
70.	Եփրեմյան Հերմինե Վանիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	149.81
71.	Սարգսյան Սուրիկ Ազատի	ա.գ.ա.	կ.գ.թ.	149.81
72.	Վարդանյան Տիգրան Վաղինակի	ա.գ.ա	կ.գ.թ.	99.87

73.	Զարիկյան Նուշիկ Հակոբի	ա.գ.ա.	կ.գ.թ.	99.870
74.	Հարությունյան Ռուզաննա Գեղամի	ա.գ.ա	կ.գ.թ.	59.920
75.	Աղասյան Արամ Լևոնի	ա.գ.ա.	Կ.գ.թ.	59.920
76.	Հովսեփյան Անահիտ Ալբերտի	ա.գ.ա.	կ.գ.թ.	59.92
77.	Ղռեջյան Տիգրան Լևոնի	գիտաշխատող		150.14
78.	Վարդանյան Հերբերտ Սասունիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.140
79.	Հակոբյան Կարինե Վերդիի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.140
80.	Մամյան Արմինե Սուրենի	գիտաշխատող	կ.գ.թ.	150.14
81.	Բալյան Լյուբով Վալերիի	գիտաշխատող		150.140
82.	Գյոնջյան Անդրանիկ Արայի	գիտաշխատող		150.140
83.	Կոբելյան Հռիփսիմե Հովհաննեսի	գիտաշխ. պաշտոնակատար		150.14
84.	Բարսեղյան Ռոզա Էդիկի	Կ.գ.ա.		119.710
85.	Ավետիսյան Աիդա Ալեքսանդրի	կ.գ.ա.		109.81
86.	Հակոբյան Նորա Խաչատուրի	կ.գ.ա.		59.855
87.	Մկրտչյան Ժաննա Համլետի	կ.գ.ա.		119.71
88.	Բոշյան Տաթևիկ Վահանի	կ.գ.ա.		119.71
89.	Բագոյան Հասմիկ Վարդանի	կ.գ.ա.		119.710
90.	Քալոյան Գոռ Անդրանիկի	կ.գ.ա.		119710
91.	Հովհաննիսյան Ծովինար Սերգեյի	ավագ լաբորանտ		54.895
92.	Մազմանկն Մերի	ավագ լաբորանտ		109.79
93.	Ղամբարյան Կատարինե Պավելի	ավագ լաբորանտ		109.790
94.	Աղասյան Կարեն Խորենի	ավագ լաբորանտ		54.895
95.	Դուդուկչյան Զարուհի Մանուկի	ավագ լաբորանտ		109.790
96.	Աբգարյան Տիգրան Արամի	ավագ լաբորանտ		43.920
97.	Գրիգորյան Գոհար Գրիգորի	ավագ լաբորանտ		32.937
98.	Չապանյան Ելենա Նորայրի	ավագ լաբորանտ		109.790

99.	Հակոբյան Վարդգես Շատինի	ավագ լաբ-տակսոդերմիստ		46
100	Բաղալյան Համեստ Սուրենի	ավագ լաբորանտ		109.79
101	Ճարատանյան Կիմա Սուրենի	ավագ լաբորանտ		109.79
102	Տոնոյան Ռիտա Գուրգենի	ավագ լաբորանտ		109.79
103	Հովհակիմյան Արման Հրաչիկի	լաբորանտ		102.517
Ընդամենը՝				**15775.479**

Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Բ.Գաբրիելյան (անուն ազգանուն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ (ստորագրություն) Հ.Մինասյան (անուն ազգանուն)

Կ.Տ.